

ՍՍՐԴԻՍ ԱՐԹ.-ԵՊԻՍ. ԶԱՆԱԼԵԱՆԻ ՆԱԽԱԿԸ ԽԱՆԻՊԵԱՆԻՆ

Ընկալայ ի 12 Մառտի 1857

Ձերոյն Ազնուութիւն

Ողորմած Տէր

Ողբալի բօթ մահուան Վեհափառ Կաթողիկոսին ամենայն
Հայոց Տեառն Ներսիսի, գիտեմ ի վաղուց հնչեցաւ ի Քաղա-
քիդ և տխրեցոյց զսիրտս անկեղծ բարեկամաց, արդարև կո-
րուատ անգիւտ թող ողբասցէ ազգն անմխիթար, զի ոչ կարէ
գտանել ի դարաւոր ժամանակս զնոյն օրինակ Ներսէս, զինչ
և իցէ կամք Տեառն օրհնեալ եղիցի:

Ժանօթ. Այս նամակը գրուած է Խալիբեան դպրոցի հիմ-
նադիր Նախիջևանցի Յարութիւն աղա Խալիբեանին երջանկա-
յիշատակ Ներսէս Կաթողիկոսի մահից երկու շաբաթ յետոյ:
Սորա մէջ յիշուած Մատթէոս եպիսկոպոսն այն Վեհապետեան
Մատթէոս արքեպիսկոպոսն է, որ Ներսէսի ժամանակ կար-
գուել է առաջնորդ Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ վիճակին,
իսկ Կաթողիկոսի մահից յետոյ տէրութեան հաճութեամբ տե-
ղափոխուել է Հայտարխան և վախճանել ու թաղուել է Ղզլա-
րում:

Մատթէոսը 48 թուին ժամանելով Նախիջևան և ձեռ-
նարկելով իւր վիճակի գործերի կառավարութեան, թշնամա-
ցել է Խալիբեանի հետ և ծնեցել է հակախալիբեան կուսակցու-
թեան կողմը, որով և զրգուել է Կաթողիկոսի զայրոյթը: Թըշ-
նամանալու պատճառն եղել է այն հանգամանքը, որ Մատթէո-
սը իւր պաշտօնավարութեան մէջ յաճախ պատահել է արգել-
քի ու զանազան խոչընդոտների Խալիբի կողմից, որ հաստա-
տուած լինելով դեռ 32 թուից Նախիջևանի և նորա գիւղերի
եկեղեցիների ընդհանուր երէցփոխ ևս և Ս. Խաչ վանքի կա-
ռավարիչ, չի կամեցել առաջնորդին եկեղեցական գումարների

Յաւալի վախճան Նորին Վեհափառութեան պատահեցաւ այսպէս, զի ի 12 փետրվար ամսոյ յետ երեկոյեան ժամերգութեան գնացի ի սենեակ սուրբ Հայրապետին, և անդ երկար եղեն խօսակցութիւնք, ի վերջոյ բանք եղեն ի վերայ փոփոխութեան բարձրագոյն կարգադրութեան (Պօթօժենայի) և պակասեալ վիճակաւորաց. յայտնեցինմա խոնարհութեամբ, թէ կամք նորին *Կայսերական Մեծութեան* և փոխարքային Վովկասուկնեազ Բարաթինսկոյ անսահման բարի են առ ազգն մեր և առ եկեղեցին, ուրեմն արագեցէք Վեհափառ Տէր, ի գրել զոր ինչ և արժան դատիք ի բարօրութիւն կարգաց եկեղեցւոյ և վասն պակասեալ առաջնորդաց, հաճոյ թուեցան բանք իմ առաջի Նորին Վեհափառութեան, ուստի լիաբերան օրհնեաց զ*Կայսրն* ամենայն ուսուաց զգորապետս նորին և զպօրս, և զկնեազ Բարաթինսկին, և եղև յոյժ գոհունակ, և ապա ասաց որդեակ եթէ Տէրութիւնն կամ կնեազ Բարաթինսկին և կամ Ազգն իմ գիտացեալ էին զբարի նպատակն իմ, զոր ունիմ ի ծածուկ ի սրտիս հարկադրեալ գտանէին սիրել զիս առաւել քան զչափն, բայց ոչ ես կարացի խօսել, և ոչ նոքա գիտացին որպէս պատմեցի Ձեզ անցեալն. և սպա հրամայեաց ինձ ի վաղուեան առուր յերկրորդ ժամու յետ կէս առուր տալ լծել զկառս և զնալ ի միասին առ փոխարքայն առ ի տալ վախճան ափենայն պահանջից: Միմիայն ցաւակցաբար ասաց

հաշիւը ներկայացնել, առարկելով, թէ ինքն իբրև կաթողիկոսից հաստատուած լիազօր երէցփոխան պարտական է համարում իրան միայն կաթողիկոսին հաշիւ տալ և նորան միայն ճանաչել տէր և իշխան եկեղեցու փողերի, և ոչ թէ առաջնորդին, որի յանձնարարական կոնդակում դրամները մասին ոչինչ չէ յիշուած:

Թշնամութիւնը զնալով զօրանում է, որովհետև առաջնորդն իւր պահանջը հիմնում է Պօթօժենիայով փրճակաւորներին յատկացրած իրաւունքների վերայ, իսկ Խալիբն իւր մերժումը հաստատում է կաթողիկոսից տրուած կոնդակներէ հիման վերայ: Երկար գրագրութիւնից յետոյ, պարզում է, որ վեհափառն ըստ ամենայնի պաշտպան է հանդիսանում Խալիբին և միանգամայն արգելում է առաջնորդին խառնուելու Նախիջևանի եկեղեցիների գրամական գործերին, որով և ստեղծուում է մի տարօրինակ դրութիւն: Վիճակում կայ առաջնորդ, բայց նա լիազօր տէր չէ իւր վիճակային գործերին, այլ կայ մի աշխարհական մարդ, որ աւելի իշխանութիւն ունի և համարեա թէ մի երկրորդ, աւելի զօրեղ առաջնորդ է հանդի-

չէր արժանի Մատթէոս եպիսկոպոսին բարձրացուցանել զսուտ աղաղակ ի լսելիս Օծելոյն Աստուծոյ *Թագաւոր կայսեր*, և զիս հրաւիրել ի դատաստան ընդ ինքեան, զի այս առաջինն է յորում Սպիսկոպոսն համարձակեցի մտանել ի դատաստան ընդ զլիւթ Հայաստանեայց եկեղեցւոյ, այս վարմունք նորա ի խոր խօցեցին զիմ սերտ մինչ իսպառ Տէր տեսցէ և դատեցէ: Եւ ապա այսու բանիւ կնքեաց զիւր խօսակցութիւն, թէ «որպէս զի մեծ են գործք քո Տէր, և յոյժ խոր են խորհուրդ քո»: Մեք խօսիմք զոր ինչ և դատիմք, բայց Աստուած տնօրինէ զոր ինչ և կամի, ո՞ր դիտէ մինչև ցառաւօտ զինչ ունի տնօրինել Աստուած, և ապա բաժանեալ ի միմեանց եկի յիմ սենեակ, և ինքն նստեալ ցիններորդ ժամն առ ի գրել զպատասխանի գրութեան Մատթէոս Արքեպիսկոպոսի ի վերջոյ խնդրեալ էր՝ զնուռ և զկէսն նորա ջրով վայելեալ միւսն առաքեալ էր առ իս ի ձեռն շաթիրաց և նոցա գտեալ զիս ի քուն դարձեալ պատմեալ էին նմա, ուստի հրամայեալ էր պահել զայն մինչ ցառաւօտ և բերել առ իս և ինքն ընկողմանեալ էր յանկողին. յառաւօտեան յերրորդում ժամու ելեալ յանկողնոյ զգե-

սանում վիճակի ամենահայաչառ կենդրոնում, հակառակ բուն, օրինաւոր առաջնորդին:

Այսպիսի հանգամանքներում կրքերը, ինչպէս սովորաբար լինում է, սաստիկ գրգռում են և կուսակցութիւնների միմեանց տապալելու ձգտման ու գործողութիւնների մէջ կորչում է չափաւորութեան աստիճանը և խոհեմութեան չափը: Կաթողիկոսը իւր իշխանական հրամանով պահանջում է, որ առաջնորդն անմիջապէս շտապի գնալ Ս. Էջմիածին, ներկայանալ հոգևոր ատեանին և հաշիւ տալ իւր կատարած ըմբոստութիւնների մասին, և, երբ նա զլսանում է կատարել այդ հրամանը և դորա փխարէն փախչում է Պետերբուրգ և ապաւինում Լազարեաններին, առանձին կոնդակով պաշտօնանկ է անում նորան, պատուիրելով թեմականներին՝ այնուհետեւ այլ ևս չճանաչել նորան առաջնորդ և չյիշել նորա անունը պատարագում: Այդ բոլորի հետևանքը լինում է մի տեսակ սառնութիւն, որ ընկնում է տէրութեան և կաթողիկոսի յարաբերութիւնների մէջ, որի հետևանքն էլ իւր հերթով լինում է այն հստիքածանօթ դէպքը երբ նոր Կայսեր թագադրութեան հանդիսին հրաւիրուում է ներկայ լինել Մատթէոս սրբազանը, իսկ կաթողիկոսին, պատուակ բռնելով նորա ծերութիւնը, առաջարկում է միայն ներկայացուցիչ ուղարկել իւր կողմից:

Տալգրութեան տալով Զալալեան Սարգիս արքեպիսկոպոսի այս նամակը, Զալալեանի, որ Ներսէսի ամենամօտ մարդ-

ցեալ էր զհանդերձս և նստեալ էր ի գրել ըստ իւրումն սովորութեան, և ի վեցերորդ ժամու ի հարկանել զանգակին մտեալ էին շաթիրքն ի լուանալ զերեսս առ ի տանել յեկեղեցին յայնժամ գտեալ էին զնա գրիչ ի ձեռին նստեալ ի վերայ պօլի աւանդեալ էր զհոգին ի տէր, իսկոյն ազդեցին ինձ և զնացեալ գտի նոյնպէս, և յետ բազում լալոյ և արտասուելոյ պատրաստեցաք զհանդէս յուղարկաւորութեան նորա զօրինակն որոյ ընդ սմին առաքեմ. այսպէս եղև ցաւալի մահ երանելի Հայրապետին մերոյ Տեառն Ներսէսի:

Չերդ Ազնուութեան մնամ աղօթարար վշտացեալ հոգւով
Արք-Սպիսկոպոս Հայոց ՍԱՐԳԻՍ

Ի 28 փետրվարի 1857 ամի
Ի ք. Թիֆլիզ

կանցից մէկն է եղել և որ կաթողիկոսի կողմից, տէրութեան վերոյիշեալ առաջարկութեան համաձայն, ներկայացուցիչ է կարգուած եղել ներկայ գտնուելու կայսեր թագադրութեան հանդիսին, մենք զլիաւորապէս ունեցել ենք երկու նպատակ. նախ մասամբ պարզել Ներսէս կաթողիկոսի մահուան մշուշապատ խնդիրը, երկրորդ, եթէ այդ էլ չլինի, տալ մեր ընթերցողներին մի գրաւոր հետաքրքրական յիշատակարան կաթողիկոսի վերջին ըստէսերի մասին:

Մենք մեր հասարակութեան մէջ այնքան տարածուած թունաւորութեան խնդրին դժուարանում ենք հաւատ ընծայել. կաթողիկոսը հաւանականաբար յանկարծամահ պէտք է եղած լինի, որ խորին ծերութեան հասած մարդկանց կեանքում յաճախ է պատահում: Մեր ձեռքին գտնուում են Ջալալեանի մի տասնեակ նամակները, գրուած Ներսէսի մահից առաջ և յետոյ, որոնք բոլորն էլ լի են բուռն սիրով և համակրութեամբ գէպի կաթողիկոսը և ոչ մի բանով տեղիք չեն տալիս կասկածելու: Բայց այս բոլորը, ի հաջկէ, կմնան դարձեալ պարզ ենթադրութիւններ, շատ թէ քիչ հաւանական, մինչև որ գտնուի մի աւելի որոշ գրաւոր յիշատակարան:

Ե. ՀԱԼԱԶԻԶ